ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅՐԵՆԻ

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Գործնական աշխատանք 1

Կազմող՝ Ա. Կոստանդյան

2021թ.

Գործնական աշխատանք 1

«Մեր լեզուն» թեման գեղեցիկ ամփոփելու հրաշալի տարբերակ է սույն գործնական աշխատանքի կատարումը, որը հնարավորություն կտա սովորողներին՝ ունենալու ակտիվ մասնակցություն և դերակատարում, առնչվելու գեղեցիկի հետ և ճաշակ կրթելու: Կարելի է անցկացնել մրցույթի ձևաչափով՝ խթանելու համար սովորողների մոտիվացիան:

Աշխատանքի նպատակը՝

- ընդհանուր գծերով պատկերացում կազմել տալ նկարազարդման արվեստի մասին,
- զարգացնել վայելչագրության հմտություններ,
- զարգացնել պատկերային մտածողություն,
- հարստացնել բառապաշարը,
- ապահովել միջառարկայական կապեր,
- ձևավորել գեղագիտական ճաշակ:

Վերջնարդյունքը՝

Աշխատանքի ավարտին սովորողները պետք է՝

- ընդհանուր գծերով գաղափար ունենան նկարազարդման արվեստի մասին,
- զանազանեն թռչնագիր, կենդանագիր և ծաղկագիր գրերը,
- կարողանան օգտվել բառարանից և ընտրեն գեղեցիկ, խորիմաստ բառեր,
- բառերը գործածեն համառոտ նախադասություններում՝ արտահայտելով հետաքրքիր մտքեր,
- տիրապետեն ձեռագիր պատկերազարդ գրքույկ կազմելու եղանակին:

Անհրաժեշտ պարագաներ՝ գունավոր մատիտներ, գրիչներ, մարկերներ, ստվարաթուղթ, կպչուն թղթեր, քանոն, ռետին, կարկին, սոսինձ, թղթի կարիչ:

Տանը՝

Աշակերտները նախապես բաժանվում են խմբերի, որոնք պետք է կատարեն նույն աշխատանքը, բայց դրսևորեն ինքնատիպ մոտեցում անելիքին: Խմբի ներսում կատարվում է համապատասխան դերաբաշխում, կարելի է ասել՝ խմբում ձևավորվում են փոքրիկ խմբեր: Առանձնանում են նկարելու ձիրք ունեցողները, բառեր ընտրողները, մտքեր գրողները և գիրքը կազմողները: Այսպիսով՝ ձևավորվում են աշխատանքային հետևյալ խմբերը մեկ խմբի մեջ.

Նկարիչներ

Բառագետներ

Իմաստաբաններ

Կազմարարներ

Նկարիչները և **կազմարարները** հավաքում և նախապատրաստում են անհրաժեշտ գրենական, նկարչական պարագաները: Համացանցի կամ այլ աղբյուրների օգնությամբ ուսումնասիրում են, դիտում ձեռագիր մատյանների նկարազարդված էջեր, կարող են տպած ունենալ օգտվելու համար: Բավական է Google-ում գրել «Ձեռագիր գրքեր» կամ «Հայ մանրանկարչություն» բառակապակցությունները, և համացանցում կբացվի նկարների մի հսկա պաշար:

Բառագետները բառարանից, դասանյութերից կամ այլ աղբյուրից ընտրում և դուրս են գրում բառեր, որոնց գլխատառերը կամ բոլոր տառերը պիտի նկարազարդվեն ու ձևավորվեն: Օրինակ՝

Իմաստաբաններն այդ բառերով կազմում են գեղեցիկ բառակապակցություններ (նախընտրելի է՝ փոխաբերական իմաստով) կամ մտքեր՝ համառոտ նախադասությունների տեսքով:

Նախապատրաստական փուլում երեխաները համագործակցում են, օգնում միմյանց: Նրանք պետք է ունենան մեկ միասնական թիմի գիտակցում:

Դասարանում՝

Բոլոր պարագաներով «զինված-պատրաստ»՝ աշակերտները ներկայանում են դասի: Աշխատանքի կատարման համար տրվում է 30 րոպե ժամանակ: Խմբի անդամներից մեկին (կարելի է, ասենք, ներառական կրթության ենթակա մի աշակերտի) հանձնարարվում է հետևել ժամանակին և մերթընդմերթ հիշեցնել դրա մասին:

Քանի որ գործնական աշխատանքն անց է կացվում մրցույթի ձևաչափով, ճիշտ ժամանակին ավարտելը պարտադիր է համարվում:

Դասի վերջին 15 րոպեների ընթացքում երեք ուսուցչից (մայրենի, կերպարվեստ, տեխնոլոգիա) կազմված ժյուրին գնահատում է յուրաքանչյուր խմբի աշխատանքը: Ուսուցիչները նախապես որոշած են լինում՝ ինչպես խրախուսել խմբերից յուրաքանչյուրին կամ առանձին մասնակիցների: Խրախուսանքները կարող են լինել՝

- այց որևէ թանգարան կամ տեսարժան վայր,
- ժամանց բնության մի գողտրիկ անկյունում կամ հենց ժամանցային վայրում,
- մեկ դասաժամ՝ նվիրված արվեստի որևէ հետաքրքիր ճյուղի(օրինակ՝ ճապոնական իկեբանա, հայկական խեցեգործություն և այլն),
- անհատական խրախուսանք(լավագույն նկարիչ, լավագույն բառագետ և այլն)։

Ուսուցիչներից յուրաքանչյուրը պետք է գնահատի ըստ իր մասնագիտության.



Խմբերը պետք է կատարեն փոխադարձ գնահատում, առողջ մթնոլորտում համեմատեն իրենց աշխատանքներն ու նշեն և՛ առավելությունները, և՛ թերությունները։